# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N26/03

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
խորհրդի նիստի

ք. Երևան 30 ապրիլի 2026թ.

**Մասնակիցների ցուցակ՝**

1. Աննա Կարախանյան
2. Անդրանիկ Ալեքսանյան
3. Իգոր Մկրտումյան
4. Կատարինե Գևորգյան
5. Նարինե Դերձակյան
6. Քրիստինե Գյոնջյան
7. Միսակ Խաչատրյան
8. Քրիստինա Հակոբյան
9. Ալբերտ Տոնեյան
10. Վեսմիրա Հարությունյան

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Վեսմիրա Հարությունյանը, որից հետո հաստատվեց օրակարգը:

**Օրակարգ՝**

1. **«Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությունում «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամակցությունը դադարեցնելու մասին**
2. **«Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի ֆինանսական հաշվետվությունը հաստատելու մասին**
3. **«Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հաստիքացուցակը հաստատելու մասին**

**1. «Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությունում «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամակցությունը դադարեցնելու մասին**

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Իգոր Մկրտումյանը, որից հետո ծավալված քննարկման ընթացքում հնչեցին տարբեր կարծիքներ:

Քննարկումների արդյունքում «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության՝ «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ-ում անդամակցությունը դադարեցնելու մասին առաջարկը դրվեց քվեարկության և ձայների 3 կողմ, 5 դեմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ չընդունվեց:

*Որոշում՝*

***Մերժել «Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությունում «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամակցությունը դադարեցնելու մասին առաջարկը:***

**2. «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի ֆինանսական հաշվետվությունը հաստատելու մասին**

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Քրիստինա Հակոբյանը: Նա ներկայացրեց «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի ֆինանսական հաշվետվությունը: Ելույթի ավարտից հետո խորհրդի անդամների կողմից տրվեցին հարցեր, որոնք պարզաբանվեցին Քրիստինա Հակոբյանի ու Նարինե Դերձակյանի կողմից:

Քննարկման արդյունքում «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհուրդը, որպես «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի լիազորություններն իրականացնող, միաձայն որոշեց՝

*Որոշում՝*

***1. Հաստատել «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի ֆինանսական հաշվետվությունը:***

**3. «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հաստիքացուցակը հաստատելու մասին**

Հարցը ներկայացրեց Քրիստինա Հակոբյանը: Ելույթի ավարտից հետո տրվեցին հարցեր, որոնց ելույթ ունեցողը տվեց պարզաբանումներ:

Քննարկման արդյունքում «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհուրդը, որպես «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի լիազորություններն իրականացնող, միաձայն որոշեց

*Որոշում՝*

***1.Հաստատել «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հաստիքացուցակը:***

**Նիստի նախագահող՝** **Իգոր Մկրտումյան**

**Նիստի քարտուղար՝** **Վեսմիրա Հարությունյան**